# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2026 թվականի թիվ 2154-Ա

## ՀՀ «ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԿ ՍԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով «Երկրապահ կամավորականների միություն» ՀԿ Սևանի տարածքային բաժնի կողմից Սևանա լճի առափնյա հատվածքում ապօրինի զբաղեցրած 4537.0 քմ հողատարածքում առկա ինքնակամ շինությունների առկայության փաստը՝ պարզեցի. ՀՀ Գլխավոր դատախազության N 19237 միջնորդագրի համաձայն՝ պետական մարմիններից ստացված փաստաթղթերի և այլ տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Երկրապահ կամավորականների միություն» ՀԿ Սևանի տարածքային կազմակերպությունը Սևանա լճի առափնյա հատվածում ապօրինի տիրապետում է շուրջ 4537.0 քմ հողատարածքի, որի վրա առկա են քանդման ենթակա շինություններ: Նման տեղեկատվություն ստացվել է Սևանի համայնքապետարան նաև «Սևան» ԱՊ ՊՈԱԿ-ից: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում Սևանի համայնքապետարանի տեղազննող հանձնախումբը 2026 թվանի հուլիսի 28-ին ուսումնասիրել է «Երկրապահ կամավորականների միություն» Սևանի տարածքային բաժնի կողմից զբաղեցրած հողատարածքում ինքնակամ տեղադրված շինությունների առկայության փաստը՝ ծավալը, շինությունների բնույթը: Պարզվել է, որ այդ հողատարածքի բացարձակ նիշը 1901.5-1902.5մ է: Տեղազննության արդյունքում պարզվել է նաև, որ տարածքում առկա են ԵԿՄ Սևանի տարածքային բաժնի անդամներին պատկանող 35 մետաղական տնակ, 50 մետաղական զրուցարան: Ուսումնասիրություններով և ԵԿՄ Սևանի տարածքային բաժնի անդամների պարզաբանումներով պարզվել է նաև, որ ԵԿՄ Սևանի տարածքային բաժնի անդամներն իրենց ընտանիքների հանգիստը կազմակերպելու նպատակով տնակները տեղադրել են ԵԿՄ Սևանի տարածքային բաժնի պատասխանատու Սամվել Գևորգյանի թույլտվությամբ: Անհրաժեշտ է նշել նաև հետևյալ փաստը՝ Սևանի քաղաքապետի՝ 12.08.1997թ. N 9 որոշման համաձայն՝ ՀՀ ԵԿՄ Սևանի բաժանմունքի ղեկավարության խնդրանքով Սևանի անտառտնտեսության հողերից 1.0 հա ՀՀ ԵԿՄ Սևանի բաժանմունքին վարձակալությամբ տրված հողատարածության վարձակալության ժամկետը երկարացվել է մինչև 1999 թվականի հոկտեմբերի 1-ը: Բացի Սևանի քաղաքապետի տվյալ որոշումից, որևէ իրավական փաստաթուղթ տվյալ հողատարածքի վերաբերյալ, այլևս առկա չէ (հողատարածքի վարձակալության պայմանագիր, շինությունների տեղադրման թույլտվություն): Փաստորեն, ՀՀ ԵԿՄ Սևանի բաժանմունքի պատասխանատուն ինքնակամ տիրապետել է 4537.0քմ հողատարածքին, ապօրինի թույլատրել է տեղադրել շինություններ (մետաղական տնակներ, զրուցարաններ): Հիմնավորվել է այն փաստը, որ ՀՀ ԵԿՄ Սևանի

2339

բաժանմունքի պատասխանատուն խախտել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության թույլտվության, առանց հողօգտագործման պայմանագրի, ինքնակամ տեղադրել է շինություններ: Օրենքով սահմանված կարգով հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ»-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների՝ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Համաձայն ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի պահանջների՝ քաղաքացու օրինական ներկայացուցչին ուղղված ծանուցումը 18.08.2026 թվականին տեղադրվել է «azdarar.am» կայքում: Օրենքով սահմանված ծանուցման ժամկետի լրանալուց հետո քաղաքացին համարվում է ծանուցված: Անհրաժեշտ է նշել, որ քաղաքացի Սամվել Գևորգյանը մահացել է 2025 թվականի օգոստոսին: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, 247-րդ հոդվածի 9-րդ կետի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել ԵԿՄ Սևանի տարածքային բաժնի կողմից ապօրինի օգտագործվող հողատարածքում առկա ինքնակամ շինությունները, իսկ հողատարածքը սահմանված կարգով վերադարձնել ««Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ»-ի տիրապետմանը:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　　　　　　　ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 21
ք.Սևան

2340

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**21 օգոստոսի 2026 թվականի թիվ 2155-Ա**

## ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի 2026թվականի բյուջեի ընդհանուր բնույթի ծախսերի հաշվից /բաժին 01, խումբ 6 դաս 1, հոդված 4823 / փոխանցել 218.600 դրամ՝ Սևան համայնքի աշխատակազմի քարտուղար Արմենուհի Ղուկասյանի անվամբ բացված ՀՀ Ֆինանսների նախարարության հ/հ-ին՝ 1510092444854400՝ Սևան համայնքի Դդմաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող հորատանցքի նախագծային կտրվածք կազմելու պայմանագրի հայտ ներկայացնելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 21
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2026 թվականի թիվ 2156-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ԻՍՊԻՐՅԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով քաղաքացի Գագիկ Իսպիրյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը՝ պարզեցի. «Սևան» ԱՊ-ի 05.05.2026թվականի 19-827 և Զ-75 զեկուցագրի տեղեկատվության համաձայն՝ կառուցապատման իրավունքի N 715-193 պայմանագրով քաղաքացի Գագիկ Իսպիրյանին տրամադրված հողատարածքում առկա են ինքնակամ շինություններ: Դա արձանագրված է ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության N 04022675 արձանագրությամբ: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում քաղաքացին սահմանված կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել Սևանի համայնքապետարան օրենքով սահմանված կարգով լսումներին մասնակցելու և պարզաբանումներ տալու նպատակով: Հարուցված վարույթի նյութերը մանրամասն ուսումնասիրելու և իրավախախտի պարզաբանումները ստանալու նպատակով 26.06.2026թվականին Սևան համայնքի ղեկավարը վարչական վարույթը կասեցրել է: Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի տրված տեղեկանքով հիմնավորվում է, որ Գագիկ Իսպիրյանին սահմանված կարգով Սևանի համայնքապետարանի կողմից չի տրվել շինարարության կամ տեղադրման թույլտվություն: Հիմնավորվել է այն փաստը, որ Գագիկ Իսպիրյանը խախտել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության թույլտվության, ինքնակամ կառուցել կամ տեղադրել է շինություններ: Օրենքով սահմանված կարգով հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների՝ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Համաձայն ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի պահանջների՝ քաղաքացուն ուղղված ծանուցումը 15.07.2026 թվականին տեղադրվել է «azdarar.am» կայքում: Օրենքով սահմանված ժամկետի լրանալուց հետո քաղաքացի Գագիկ Իսպիրյանը համարվել է ծանուցված: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ

հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել կառուցապատման իրավունքով Գագիկ Իսպիրյանին տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 21
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**21 օգոստոսի 2026 թվականի թիվ 2157-Ա**

## ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ՍԱՄՎԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով քաղաքացի Տիգրան Գևորգյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը՝ պարզեցի. ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության N 040226199 արձանագրության համաձայն՝ Տիգրան Գևորգյանի կողմից օգտագործվող հողատարածքում առկա են ինքնակամ տեղադրված 2 հատ վագոն-տնակ և 16 հատ տաղավար: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում քաղաքացին սահմանված կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել Սևանի համայնքապետարան լսումներին մասնակցելու և պարզաբանումներ տալու նպատակով, ինչպես նաև վարչական գործի քննությանը մասնակցելու նպատակով: Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի տրված տեղեկանքով հիմնավորվում է, որ Տիգրան Սամվելի Գևորգյանին սահմանված կարգով Սևանի համայնքապետարանի կողմից չի տրվել շինարարության կամ տեղադրման թույլտվություն: Հիմնավորված է այն փաստը, որ Տիգրան Գևորգյանը խախտել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության կամ տեղադրման թույլտվության, ինքնակամ կառուցել կամ տեղադրել է շինություններ: Օրենքով սահմանված կարգով քաղաքացին չունի հողօգտագործման իրավունք՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ չունի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիր: Քաղաքացին խախտել է ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները: Հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող, պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների՝ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ

«ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, 48-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Տիգրան Գևորգյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք երկու հարյուր հազար դրամի չափով:
2. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել Տիգրան Գևորգյանի կողմից ապօրինի օգտագործվող հողատարածքում առկա ինքնակամ տեղադրված շինությունները:
3. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 21
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**21 օգոստոսի 2026 թվականի թիվ 2158-Ա**

## ՔԱՂԱՔԱՑԻ ՍՎԵՏԼԱՆԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով քաղաքացի Սվետլանա Իսահակյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը՝ պարզեցի. «Սևան» ԱՊ-ի 05.05.2026թվականի 19-827 և Ձ-83 զեկուցագրի տեղեկատվության համաձայն՝ կառուցապատման իրավունքի N 1280-930 պայմանագրով քաղաքացի Սվետլանա Իսահակյանին տրամադրված հողատարածքում առկա են ինքնակամ շինություններ: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում քաղաքացին սահմանված կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել Սևանի համայնքապետարան օրենքով սահմանված կարգով լսումներին մասնակցելու և պարզաբանումներ տալու նպատակով: Հարուցված վարույթի նյութերը մանրամասն ուսումնասիրելու և իրավախախտի պարզաբանումները ստանալու նպատակով Սևան համայնքի ղեկավարը 26.06.2026թվականին վարչական վարույթը կասեցրել է: Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի տրված տեղեկանքով հիմնավորվում է, որ Սվետլանա Իսահակյանին սահմանված կարգով Սևանի համայնքապետարանի կողմից չի տրվել շինարարության կամ տեղադրման թույլտվություն: Հիմնավորվել է այն փաստը, որ Սվետլանա Իսահակյանը խախտել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները՝ առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության թույլտվության, ինքնակամ կառուցել կամ տեղադրել է շինություններ: Օրենքով սահմանված կարգով հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների՝ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Համաձայն ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի պահանջների՝ քաղաքացուն ուղղված ծանուցումը 15.07.2026 թվականին տեղադրվել է «azdarar.am» կայքում: Օրենքով սահմանված ժամկետի լրանալուց հետո քաղաքացի Սվետլանա Իսահակյանը համարվել է ծանուցված: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի

2346

պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել կառուցապատման իրավունքով Սվետլանա Իսահակյանին տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 21
ք.Սևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**21 օգոստոսի 2026 թվականի թիվ 2159-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ծովակալ Իսակովի փողոց թիվ 1 / 2 հողամաս հասցեում գտնվող 0.20722հա մակերեսով հողատարածքը /կադաստրային ծածկագիր՝ 05-004-0109-0052/, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 3 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝
1) առաջին միավոր՝ 0.07384 հա մակերեսով անշարժ գույքի համար տրամադրել ք. Սևան, Մ. Սարյան փողոց թիվ 1 / 2 հողամաս հասցե;
2) երկրորդ միավոր՝ 0.08158 հա մակերեսով անշարժ գույքի համար տրամադրել ք. Սևան, Ծովակալ Իսակովի փողոց փողոց թիվ 1 / 2 հողամաս հասցե:
3) երրորդ միավոր՝ 0.0518 հա մակերեսով անշարժ գույքի համար տրամադրել ք. Սևան, Մ. Սարյան փողոց թիվ 1 / 1 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 21
ք.Սևան

2348

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**21 օգոստոսի 2026 թվականի թիվ 2160-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-Ի N 1997-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի օգոստոսի 6-ի «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1997-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

1) «Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.01277հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, այլ հողեր՝ գործառնական նշանակության հողատարածքի՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ֆրանսիական փողոց թիվ 25 / 2 հողամաս հասցե»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 21
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am


# ՈՐՈՇՈՒՄ

**21 օգոստոսի 2026 թվականի թիվ 2161-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.05564հա մակերեսով հողամասը /ք. Սևան,/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, այլ՝ գործառնական նշանակության, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Կարմիր բանակի փողոց թիվ 2 / 3 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 21
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**21 օգոստոսի 2026 թվականի թիվ 2162-Ա**

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով Սահակ Սահակյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Սահակ Սահակյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 19 հասցեում ջրամիացման և ջրահեռացման համարագերի կառուցման համար:
2. Սահակ Սահակյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Սահակ Սահակյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պաշտոնական հրապարակելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 21
ք.Սևան

2351

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**21 օգոստոսի 2026 թվականի թիվ 2163-Ա**

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14$^3$ կետով, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան հասցեում գտնվող 0.16879հա մակերեսով հողատարածքի/ կադաստրային ծածկագիր՝ 05-004-0032-0104 / նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման՝ գործառնական նշանակության հողամասի:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 21
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2026 թվականի թիվ 2164-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ կետով, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, հասցեում գտնվող 0.03367հա մակերեսով հողատարածքի / կադաստրային ծածկագիր՝ 05-004-0032-0106/ նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման՝ գործառնական նշանակության հողամասի:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 21
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**21 օգոստոսի 2026 թվականի թիվ 2165-Ա**

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ, ՏԵՂԱԴԻՐՔԻ, ՄԱԿԵՐԵՍԻ ՈՒՂՂՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ գ. Վարսեր, տնամերձ հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 1084926, տրված՝ 31.08.2004թ./գծային չափերը, տեղադիրքը, մակերեսը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ գ. Վարսեր, տնամերձ հասցեում գտնվող անշարժ գույքի գծային չափերը, տեղադիրքը և մակերեսը:
2. Գ. Վարսեր, տնամերձ հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, 12-րդ փողոց թիվ 72 բնակելի տուն հասցե:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 21
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**24 օգոստոսի 2026 թվականի թիվ 2166-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, $48^1$, 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026 թվականի օգոստոսի 21-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում վարձակալության իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Սեմյոնովկա հողամաս հասցեում գտնվող 0.26134 հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողատարածքը /ծածկագիր՝ 05-079-0131-0007/ 25 տարի վարձակալության իրավունքով, 3930 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Արտյոմ Լյովայի Դավթյանին:
2. Արտյոմ Լյովայի Դավթյանի հետ կնքել վարձակալության իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի վարձակալության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 24
ք.Սևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**24 օգոստոսի 2026 թվականի թիվ 2167-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, $48^1$, 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026 թվականի օգոստոսի 21-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում վարձակալության իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք.Սևան հողամաս հասցեում գտնվող 0.18372 հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողատարածքը /ծածկագիր՝ 05-004-0129-0076/ 25 տարի վարձակալության իրավունքով, 2760 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Տիգրան Արմենի Պետեյանին:
2. Տիգրան Արմենի Պետեյանի հետ կնքել վարձակալության իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի վարձակալության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 24
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**24 օգոստոսի 2026 թվականի թիվ 2168-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, $48^1$, 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026 թվականի օգոստոսի 21-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում վարձակալության իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Ծովագյուղ հողամաս հասցեում գտնվող 1.0923 հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, արոտավայր՝ գործառնական նշանակության հողատարածքը /ծածկագիր՝ 05-049-0106-0178/ 25 տարի վարձակալության իրավունքով, 11000 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Հրանտ Մաքսիմի Գուլանյանին:
2. Հրանտ Մաքսիմի Գուլանյանի հետ կնքել վարձակալության իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի վարձակալության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 24
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**24 օգոստոսի 2026 թվականի թիվ 2169-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, $48^1$, 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026 թվականի օգոստոսի 21-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում վարձակալության իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Սեմյոնովկա հողամաս հասցեում գտնվող 0.48 հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, խոտհարք՝ գործառնական նշանակության հողատարածքը /ծածկագիր՝ 05-079-0124-0073/ 25 տարի վարձակալության իրավունքով, 6240 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Անահիտ Վարազդատի Խուդաբաշյանին:
2. Անահիտ Վարազդատի Խուդաբաշյանի հետ կնքել վարձակալության իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի վարձակալության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 24
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**24 օգոստոսի 2026 թվականի թիվ 2170-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, $48^1$, 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026թ. օգոստոսի 21-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում կառուցապատման իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան,Սայաթ-Նովա փողոց 11 / 3 հողամաս /վկայական N26052026-05-0026/ հասցեում գտնվող 0.00451հա մակերեսով, բնակավայրերի՝ նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման՝ գործառնական նշանակության հողատարածքի 31.57քմ մակերեսը՝ կանաչապատման, 13.53քմ մակերեսը՝ տաղավարի տեղադրման նպատակով, 15 տարի կառուցապատման իրավունքով, 7000 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Վահե Ռոբերտի Խաչատրյանին:
2. Վահե Ռոբերտի Խաչատրյանի հետ կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի կառուցապատման իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պաշտշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 24
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**24 օգոստոսի 2026 թվականի թիվ 2171-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Լաուրա Գրիգորյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Հրազդանի փողոց թիվ 42 / 28 հասցեում կառուցված 29.90 քմ մակերեսով ավտոտնակը, 9.20 քմ մակերեսով նկուղը և 29.90 քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Հրազդանի փողոց թիվ 42 / 28 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 16.04.2026թ. թիվ 1183-Ա որոշումով օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 18.08.2026թ. պետական գրանցում ստացած 29.90 քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, 9.20 քմ մակերեսով նկուղը ՝ 1քմ՝ 3346 դրամ, զբաղեցրած 29.90 քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5 դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Լաուրա Հայկի Գրիգորյանին:
2. Քաղ. Լաուրա Հայկի Գրիգորյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 24
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**24 օգոստոսի 2026 թվականի թիվ 2172-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Արաքսի Մանուկյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 42 / 1 հասցեում կառուցված 44.62 քմ մակերեսով ավտոտնակը, 2.87 քմ մակերեսով ծածկը և 47.50 քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքը ուղղակի գործարքով Արաքսի Մանուկյանին վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 42 / 1 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 28.07.2026թ. թիվ 1681-Ա որոշմամբ՝ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 19.08.2026թ. պետական գրանցում ստացած 47.50 քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ-2887.5 դրամ, 44.62 քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ-1673 դրամ, 2.87 քմ մակերեսով ծածկը՝ 1քմ՝ 3346դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Արաքսի Սուրենի Մանուկյանին:
2. Քաղ. Արաքսի Սուրենի Մանուկյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 24
ք.Սևան

2361

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**24 օգոստոսի 2026 թվականի թիվ 2173-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 2055-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի օգոստոսի 12-ի «Ինքնակամ կատարված շինարարական աշխատանքները օրինական ճանաչելու մասին» N 2055-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
1) որոշման 1-ին կետում՝ «12.62 քմ մակերեսով ծածկերի, 11.69 քմ մակերեսով անասնաշենքի» բառերի փոխարեն կարդալ «7.11 քմ մակերեսով ծածկի» բառերը:
2) որոշման 2-ին կետում «10.10 քմ մակերեսով ծածկը ճանաչել ինքնակամ» բառերի փոխարեն կարդալ «15.61 քմ մակերեսով ծածկերը և 11.96 քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 8.49/ ճանաչել ինքնակամ» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 24
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

24 օգոստոսի 2026 թվականի թիվ 2174-Ա

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 18.11.2025թ. N125-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով քաղ. Դավիթ Գրիգորյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող Դավիթ Գրիգորյանի կողմից՝ Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց, 40 շենք թիվ 9 / 1 հասցեում գտնվող բնակարանին կից կառուցված կցակառույցի շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պաշտոնական իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 24
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2175-Ա**

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԱԿԵՐԵՍԻ, ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ, ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ սեփականության իրավունքով Արայիկ Վարդանյանին պատկանող, Գեղարքունիքիմարզ, Սևան համայնք, գ. Գագարին, Կոմիտասի փողոց թիվ 3, 6 հասցեում գտնվող բնակարանի /վկայական՝ N 20092013-05-0048/ գծային չափերը և մակերեսը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գագարին, Կոմիտասի փողոց թիվ 3, 6 հասցեում գտնվող բնակարանի գծային չափերը և մակերեսը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2176-Ա**

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ կետերով, հիմք ընդունելով քաղ. Ռուզաննա Ղարիբյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 7 բնակելի տուն /վկայական՝ N 19052026-05-0044/ հասցեում գտնվող 0.0615 հա մակերեսով հողամասում ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, նկատի ունենալով որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ընդհանուր բաժնային Սեփականության իրավունքով Ռուզաննա Ղարիբյանին, Ռազմիկ և Անահիտ Մնեյաններին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 7 հասցեում գտնվող 0,0615 հա մակերեսով հողատարածքում սեփականատերերի կողմից 2006թ. ինքնակամ կառուցված 40.66քմ մակերեսով տնտեսական շինությունը /ներքին մակերեսը 36.41քմ/, 2006-2010թթ.կառուցված 26.92քմ մակերեսով ծածկերը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026ZWFDP2/՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 1673դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2177-Ա**

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Հակոբ Նապոլեոնի Մարգարյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 20 խանութ հասցեում գտնվող անշարժ գույքին կից՝ համայնքային սեփականություն հանդիսացող 324.6 քմ մակերեսով հողատարածքում ինքնակամ կառուցված 104.34քմ մակերեսով օժանդակ շինությունը և 51.00քմ մակերեսով պահեստն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատար ածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Հակոբ Մարգարյանի կողմից՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 20 խանութ հասցեում գտնվող անշարժ գույքին կից՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում 2004 թվականին ինքնակամ կառուցված 104.34քմ մակերեսով օժանդակ շինությունը /ներքին մակերեսը՝ 81.25 քմ/, 51.00 քմ մակերեսով պահեստը /ներքին մակերեսը՝ 44.54 քմ/, զբաղեցրած 324.6 քմ. մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային, հասարակական կառուցապատման՝ գործառնական նշանակության:
2. Հակոբ Մարգարյանի կողմից ինքնակամ կառուցված 39.68քմ. մակերեսով օժանդակ շինությունը և 51.00 քմ մակերեսով պահեստը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023HC97QD/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 20 / 2 տնտեսական շինություն հասցե:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2178-Ա

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00132հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման՝ գործառնական նշանակության, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 145 / 4 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2179-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.08328հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Հ.Այվազովսկու փողոց թիվ 5 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2180-Ա**

## ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «Դիջիդաթա» ՓԲԸ-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «Դիջիդաթա» ՓԲԸ-ին տրամադրել քանդման թույլտվություն Սևան համայնք, գ. Գագարին հասցեում գտնվող պահեստի, պահակատան և լուսարձակի/կադաստրային ծածկագիր՝ 05-004-0301-0009 /քանդման համար:
2. «Դիջիդաթա» ՓԲԸ-ն շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «Դիջիդաթա» ՓԲԸ-ն պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2181-Ա**

## ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով «Դիջիդաթա» ՓԲԸ-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «Դիջիդաթա» ՓԲԸ-ին տրամադրել քանդման թույլտվություն Սևան համայնք, գ. Գագարին հասցեում գտնվող պահեստի, վարչական շենքի, պահակատան, տնտեսական շենքի և ջրավազանների /կադաստրային ծածկագիր՝ 05-004-0301-0014/ քանդման համար:
2. «Դիջիդաթա» ՓԲԸ-ն շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. «Դիջիդաթա» ՓԲԸ-ն պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2182-Ա**

## ՀՈՂԱՄԱՍԻ ՏԵՂԱԴԻՐՔԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ սեփականություն իրավունքով Հայկ Մաթևոսյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Ամառանոցային փողոց, 1-ին նրբանցք թիվ 3 հողամաս հասցեում գտնվող 0.06000 հա մակերեսով անշարժ գույքի / վկայական՝ N 30052025-05-0005/ տեղադիրքը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ Սևան համայնք, ք. Սևան, Ամառանոցային փողոց, 1-ին նրբանցք թիվ 3 հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքի տեղադիրքը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2183-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00366հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Գեղամա փողոց թիվ 15 / 2 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2184-Ա**

## ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 2016 թվականի հունիսի 2-ի N631-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան համայնք, գ. Ջովաբեր, 4-րդ փողոց, 2-րդ նրբանցք, տուն 7 հասցեի բնակիչ Զոյա Ռազմիկի Հակոբյանի (ծնված՝ 25.09.1977թ.) դիմումը՝ դստեր՝ Մարիամ Կամոյի Մարտիրոսյանի (ծնված՝ 27.04.2002թ.) անվամբ բնակարան ձեռք բերելու և այն գրավադրելու մասին, հիմք ընդունելով Սևանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 21-ի նիստի արձանագրությունը, անգործունակ քաղաքացու իրավունքների և շահերի պաշտպանությունը՝ **որոշում եմ.**

1. Թույլատրել խնամակալ Զոյա Ռազմիկի Հակոբյանին (ծնված՝ 25.09.1977թ.)՝ խնամարկյալ՝ Մարիամ Կամոյի Մարտիրոսյանի (ծնված՝ 27.04.2002թ.) անվամբ հիփոթեքային կարգով ձեռք բերելու և գրավադրելու ՀՀ Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, Երկրաբանների արշավ փողոց, շենք 1, բնակարան 17 հասցեում գտնվող անշարժ գույքը:
2. Քաղաքացի Զոյա Հակոբյանին՝ գործարքը կնքել և հետագայում պաշտպանել դստեր իրավունքներն ու շահերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


# ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2185-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Արթուր Առաքելյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Ծաղկունք հասցեում գտնվող անշարժ գույքի /կադաստրային ծածկագիր՝ 05-047-0030-0003/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Ծաղկունք հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Ծաղկունք, 5-րդ փողոց, 1-ին նրբանցք թիվ 6 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պաշտաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2186-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Նարե Շխոյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ, տնամերձ հասցեում գտնվող առանձնատան /վկայական՝ 1162570, տրված՝ 31.05.2005թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ, տնամերձ հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 5-րդ փողոց թիվ 14 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2187-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 62 / 2 և Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 62 / 1 հողամաս հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 62 / 1 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2188-Ա

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, հիմք ընդունելով Ծաղկունքի գյուղապետարանի կողմից 2001 թվականի նոյեմբերի 22-ին կազմված «Հողամասը վիճակահանությամբ սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու արդյունքների մասին» թիվ 1 արձանագրությունը, Սևան համայնքի ավագանու՝ 2026 թվականի օգոստոսի 10-ի՝ «Հողատարածքն անհատույց նվիրելու մասին» N 119-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Ծաղկունք, 5-րդ փողոց, 5-րդ նրբանցք թիվ 34 հասցեում գտնվող, բնակավայրերի՝ նպատակային նշանակություն, բնակելի կառուցապատում՝ գործառնական նշանակություն ունեցող 0.12հա մակերեսով հողատարածքը / վկայական՝ N 21052026-05-0031/անհատույց սեփականության իրավունքով նվիրել Գնել Մամիկոնի Սարգսյանին:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2189-Ա**

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Գագիկ Անդրիկյանի դիմումը՝ Ծովագյուղ բնակավայրի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 14.04.1991թ.N4նիստի որոշմամբ Գագիկ, Աննման, Նարինե, Անուշ և Մարտին Անդրիկյաններին հատկացված 0.145հա մակերեսով հողատարածքը և հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ծովագյուղ բնակավայրի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 14.04.1991թ. N4 նիստի որոշմամբ Գագիկ Սերյոժայի Անդրիկյանին /ծնված՝ 18.09.1959թ./, Աննման Ռաֆիկի Անդրիկյանին /ծնված՝ 29.06.1960թ./, Նարինե Գագիկի Անդրիկյանին /ծնված՝ 26.01.1984թ./, Անուշ Գագիկի Անդրիկյանին /ծնված՝ 22.09.1985թ./, Մարտին Գագիկի Անդրիկյանին /ծնված՝ 20.08.1988թ./ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված 1450քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 2.2քմ մակերեսով հողատարածքը ճանաչել Գագիկ, Աննման, Նարինե, Անուշ և Մարտին Անդրիկյանների սեփականության իրավունքը:
2. Գագիկ, Աննման, Նարինե, Անուշ և Մարտին Անդրիկյաններին պատկանող 1452.2քմ մակերեսով հողատարածքում 1983թ. կառուցված երկհարկանի բնակելի տունը՝ 1-ին հարկ՝ 113.3քմ. մակերեսը /ներքին մակերեսը՝ 83.70քմ/, 2-րդ հարկ՝ 114.3քմ /ներքին մակերեսը՝ 88.60քմ/, 13.40քմ մակերեսով բաց պատշգամբը, 1997թ. կառուցված 83.9քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 66.5քմ/, 11.7քմ մակերեսով կաթսայատունը /ներքին մակերեսը՝ 8.6քմ/, 1987թ. կառուցված 92.3քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 77.2քմ/ և 1997թ. կառուցված 12.30քմ մակերեսով բաց պատշգամբը ճանաչել Գագիկ, Աննման, Նարինե, Անուշ և

Մարտին Անդրիկյանների սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 3-րդ փողոց թիվ 3 բնակելի տուն հասցե:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2190-Ա

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N 1214-Ա, ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N 1885-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի մայիսի 20-ի «Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1214-Ա և հուլիսի 27-ի «Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի մայիսի 20-ի N 1214-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1885-Ա որոշումները որոշումները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2191-Ա**

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Արտյոմ Իսպիրյանի դիմումը՝ ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 25 շենքի հարևանությամբ՝ ավտոտնակների շարքում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 28.4քմ մակերեսով ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Արտյոմ Մակբեթի Իսպիրյանի կողմից՝ ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 25 շենքի հարևանությամբ՝ ավտոտնակների շարքում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 28.4քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 26.06քմ/ և զբաղեցրած 28.4քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության:
2. Արտյոմ Մակբեթի Իսպիրյանի կողմից ինքնակամ 28.4քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026MFNBYN/՝ տրամադրելու Սևան համայնք ք. Սևան, Հրազդանի փողոց թիվ 41 / 15 ավտոտնակ հասցե:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 5-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2192-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք -1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.01510 հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման՝ գործառնական նշանակության, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 20 / 1 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**25 օգոստոսի 2026 թվականի թիվ 2193-Ա**

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 18.11.2025թ. N125-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով «ԳՈՌ-ԴԱՎ» ՍՊԸ-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել՝ կառուցապատող «ԳՈՌ-ԴԱՎ» ՍՊԸ-ի կողմից՝ Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 12 հասցեում կառուցված բազմաբնակարան բնակելի շենքի շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25
ք.Սևան